

ամէն կերպ խնամք եւ փոյթ տարաւ: Այս բաւական չէ. քանի՛ քանի անգամ Տիւղեանք արքունի պալատն հիւր մնացին: Այսպէս շուտով առաջին յարաբերութիւնները նորոգուած էին:

Սակայն ի՞նչ կ'ընէին թշնամիք:

Յառաջուան պէս իրենց չարանիւթ նենգութիւնները նորոգեցին. բայց այս անգամ Սուլթան Մէճիտուղեց անձամբ համոզուիլ բանսարկուաց քսութեան ստութեանը: Ելաւ Գուրուչէշմէի ամբաստանեալ պալատին կարծեցեալ զեղխութիւնները տեսնելու գնաց. բայց հոն մեծապէս հարուածեցաւ թշնամեաց խմբակը: Ստութեանց համար արդար բարկութեամբ զինուած՝ եւս առաւել ճանչցաւ Սուլթանն Յակոբայ յարգը:

1839 ին Յակոբայ կրտսեր եղբայրը՝ Պօղոս Չէլէպի առանձինն հրովարտակաւ Արտուշի Էրչաղէօ անուանեցաւ, բայց Յակոբայ ձեռքին տակ:

1842 ին Ապրիլի գեղեցիկ օր մը Յակոբ Չէլէպին փողերանոցէն դարձած ատեն՝ սաստիկ տկարութիւն մը զգաց, որ այնչափ աւելցաւ՝ մինչեւ մօտալուտ վտանգէ մը կը վախցուէր: Բորբոսային ջերմամբ սկսած էր տառապիլ. բայց այս անգամ Վեհ. Սուլթանին կողմանէ եկած բժշկաց ճարտարութիւնն յաջողութեամբ պսակուեցաւ. — Յակոբ Չէլէպի վտանգն անցուց:

Յակոբ Չէլէպի ամուսնացեալ էր Պօղոս Պիլէզէքճիի՝ Լուցիկա դստեր հետ, եւ ութը զաւակ ունեցաւ, որոնցմէ երկուքը՝ Յովհաննէս եւ Գրիգոր՝ տակաւին ութը տարւան հասակին